

**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՄՐՑՈՒՅԹՆԵՐ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության առաջատար պաշտոնների խմբի երկրորդ ենթախմբի ներքոգրյալ թափուր պաշտոնը զբաղեցնելու համար

N	Համայնքային ծառայության թափուր պաշտոնի անվանումները	Ծածկագիր	Նշված թափուր պաշտոնի անձնագրերով սահմանված հիմնական գործառույթների նկարագիրը	Նշված թափուր պաշտոնի անձնագրերով այդ պաշտոնները զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետմանը ներկայացվող պահանջները	Պահանջվող փաստաթղթերը
1	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի բյուջեի եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետի տեղակալ	2.2-11	<p>Բաժնի պետի տեղակալը.</p> <p>ա) կատարում է բաժնի պետի հանձնարարությունները՝ ժամանակին, պատշաճ և որակով.</p> <p>բ) իր կողմից մշակված իրավական ակտերի նախագծերի, ծրագրային փաստաթղթերի և նյութերի փորձաքննության ուղարկվելու անհրաժեշտության մասին առաջարկություններ է ներկայացնում բաժնի պետին.</p> <p>գ) անհրաժեշտության դեպքում բաժնի պետի համաձայնությամբ կամ հանձնարարությամբ մասնակցում է համապատասխան տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների կողմից կազմակերպված քննարկումներին և այլ միջոցառումներին.</p> <p>դ) անհրաժեշտության դեպքում իր լիազորությունների սահմաններում նախապատրաստում և բաժնի պետին է ներկայացնում առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդագրեր, զեկուցագրեր և այլ գրություններ.</p> <p>ե) իրականացնում է քաղաքացիների դիմում-բողոքների սահմանակարգով քննարկումը և արդյունքները ներկայացնում բաժնի պետին.</p> <p>զ) ստորագրում է իր կողմից պատրաստվող փաստաթղթերը.</p> <p>է) իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:</p>	<p>Բաժնի պետի տեղակալը</p> <p>ա) Համայնքային ծառայության առաջատար պաշտոնները՝ բարձրագույն կրթություն, համայնքային ծառայության կամ պետական ծառայության պաշտոններում առնվազն երկու տարվա ստաժ կամ վերջին երեք տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ կամ վերջին ութ տարվա ընթացքում համայնքի ավագանու անդամի աշխատանքային գործունեության առնվազն երկու տարվա փորձ կամ առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, իսկ ներքին առդիտի ստորաբաժանման ղեկավարի պաշտոնի դեպքում՝ առնվազն երեք տարվա մասնագիտական գործունեության փորձ առդիտի ոլորտում.</p> <p>Մինչև 2015թվականի հունվարի 1-ը համայնքային ծառայության առաջատար պաշտոնների անձնագրերը՝ ընդգրկում են համայնքային ծառայության, պետական և (կամ) համայնքային կառավարման ոլորտի առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ:</p> <p>բ) տիրապետում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, «Տեղական ինքնակառավարման մասին», «Համայնքային ծառայության մասին», «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին», «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներին.</p> <p>գ) տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը</p> <p>դ) ունի համակարգչով և ժամանակակից տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն</p> <p>ե) տիրապետում է ռուսերեն (կարդում, կարողանում է բացատրվել) լեզվին.</p>	<p>Մրցույթին մասնակցել ցանկացող՝ հայերենին տիրապետող, 18 տարին լրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիները և Հայաստանի Հանրապետությունում կախստական կարգավիճակ ունեցող անձինք պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը (բնօրինակների հետ միասին).՝</p> <p>ա) գրավոր դիմում/ ձևը լրացվում է տեղում/.</p> <p>բ) բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթղթի/ դիպլոմի և աշխատանքային գրքուկի պատճենները/.</p> <p>գ) արական սեռի անձինք ներկայացնում են նաև զինգրքուկի կամ դրան փոխարինող ժամանակավոր և զորակոչային տեղամասին կցագրման վկայականների պատճենները կամ համապատասխան տեղեկանք.</p> <p>դ) հայտարարություններ՝ /լրացվում են տեղում/</p> <p>ե) 1 լուսանկար՝ 3x4 սմ. չափսի</p> <p>զ) անձնագրի պատճենը.</p> <p>Փաստաթղթերը ներկայացնել անձամբ</p>
Մրցույթներն անցկացնելու օրը, ժամը, վայրը			Փաստաթղթերի ընդունումը		Դիմումների և փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետը
օրը՝ 2015 թվականի օգոստոսի 28-ին ժամը՝ 11:00 վայրը՝ ք. Գյումրի, Վարդանանց հր. 1			Փաստաթղթերը ներկայացնելու, լրացուցիչ տեղեկություններ ստանալու, պաշտոնի անձնագրերը և հարցաշարերը ստանալու համար դիմել Գյումրու քաղաքապետարան՝ (1-ին հարկ) Փաստաթղթերի ընդունումը՝ ամեն օր, ժամը 09:00 – 18:00, բացի շաբաթ և կիրակի օրերից		2015 թվականի մարտի 25-ից մինչև 2015թվականի ապրիլի 14-ը ներառյալ